

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ
Գարեգին Պատրիարք Գազանճեանի
Թաղման օրը, 15 Մարտ 1998

*Թորգոմ Սրբազան Պատրիարք Հօր
ցաւակցական խօսքը*

Կոստանդնուպոլսոյ Մայր Եկեղեցւոյ մէջ նոյն այս ժամուն կը կատարուի թաղման արարողութիւնը Թուրքիոյ Հայոց Պատրիարք Գարեգին Արք. Գազանճեանի: 1940-ին, 13 տարեկան պատանի, եկաւ Երուսաղէմ իրրեւ աշակերտ ժառանգաւորաց վարժարանի: Այստեղ մեծցաւ իրրեւ գաւակը այս Սուրբ Աթոռին: Եւ 1950-ին ձեռնադրուելով, Կոստանդնուպոլսոյ Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի հրաւերով, կանչուեցաւ ծառայելու Ս. Խաչ Դպրեվանքի իրրեւ տեսուչ, դաստիարակ եւ հոգեւոր հովիւ: 1960 թուականին հրաւիրուեցաւ ծառայելու Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին մէջ:

Հովուական ծառայութեան հետ միասին, կատարեց բոլոր այն պարտականութիւնները որոնք այդ թեմին գործունէութեանց էին կապուած: 1966 թուականին ալ Աւստրալիոյ Թեմի առաջնորդ ընտրուելով այնտեղ ծառայեց, մինչեւ 1980 թուականը: Այդ թուականէն յետոյ վերադարձաւ իր տունը, այստեղ, Սուրբ Աթոռ, եւ իր ծառայութիւնը շարունակեց դարձեալ իրրեւ գաւակը այս Միաբանութեան եւ այս Աթոռին:

Լուսարարապետի պաշտօնին առընթեր ան կատարեց այն բոլոր պարտականութիւնները որ այս Սուրբ Աթոռը կը պահանջէ իր գաւակներէն:

Շնորհիւ Արք. Գալուստեան Պատրիարքի վախճանումէն յետոյ ընտրուեցաւ Պատրիարք Կոստանդնուպոլսոյ: Իր Պատրիարքութեան Ութը տարիներուն անկեա եղաւ հոգեւոր հայրը Կոստանդնուպոլսոյ եւ Թուրքիոյ հայ ժողովուրդին, հոգատարը եղաւ Մշակութային, արուեստի, բարեսիրական եւ կրթական բոլոր կազմակերպութիւններուն, եւ հոգեւոր պետը եւ Պատրիարքը պատմական Նուիրապետական Աթոռներէն Կոստանդնուպոլսոյ:

Իր ամբողջ կեանքին ընթացքին չի դադրեցաւ սորվել եւ սորվեցնել: Իրրեւ Ուսուցիչ իր հետաքրքրութիւնները պահեց եւ շարունակեց ծառայել, կեանքէն ինչ դժուարութիւններ ալ որ իր առջեւը գտաւ: Ոչ միայն ուսումնական հետաքրքրութիւններ ունէր, այլ նաեւ գրելու շնորհիւ, եւ իր ժամանակին մէկ մասը օգտագործեց, որչափ կարելի էր, գրելու իր փափաքը եւս իրագործելու համար:

Իր կեանքի վերջին երկու երեք տարիներու ընթացքին, իր ֆիզիքական եւ առողջական վիճակը սկսած էր մտահոգիչ դառնալ: Այդ բոլորին հակառակ չի դադրեցաւ արտայայտել իր փափաքը եւ թելադրութիւնը որ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքաբանը արդիւնաշատ գործունէութիւն ունենայ Թուրքիոյ Հայոց հոգեւոր եւ մշակութային կեանքը աշխոյժ պահելու իր առաքելութեան եւ կոչումին մէջ:

Ան մեզի համար, իրրեւ հոգեւոր եղբայր, մնաց զաւակը այս Սուրբ Աթոռին: Ունէր նախանձախնդրութիւն որ մեր Եկեղեցական արարողութիւնները կատարուէին համաձայն մեր աւանդութիւններուն: Ունէր հետաքրքրութիւն տեսնելու որ պարտականութիւն ստանձնողները իրենց պարտականութիւնները կատարէին լիովին: Ան Աստուծմէ իրեն տրուած շնորհները ջանաց լաւագոյնս օգտագործել որչափ որ կարելի էր, մարդկային բոլոր տկարութիւններով հանդերձ:

Այսօր իր հանգիստը կը գտնէ: Եւ մենք իրրեւ այն տունը եւ ընտանիքը եւ այն հաստատութիւնը ուր ան մուտք գործեց պատանի տարիքին, եւ ուր ան մեծացաւ, կ'աղօթեմք որ Աստուած ընդունի եւ լուսաւորէ հոգին իր հոգեւոր սպասաւորին, պաշտօնէին ու ծառային:

Նոյն ժամանակ կ'աղօթեմք որ Աստուած շուտով վերացնէ սուգի շղարշը պատմական եւ Նուիրապետական Աթոռին վրայէն Կոստանդնուպոլսոյ: Եւ Թուրքիոյ մեր հայ հաւատացեալ ժողովուրդը ունենայ իր հոգեւոր հայրը, շարունակէ իր հոգեւոր, մշակութային եւ կրթական կեանքը եւ աւանդութիւնները ապրիլ, այնպէս ինչպէս Կոստանդնուպոլսոյ մէջ սովորութիւն ունին իրագործելու եւ հանդիմանալով Եկեղեցական արարողութիւններուն մասնակցելու, իրրեւ Եկեղեցասէր ժողովուրդ: Կ'աղօթեմք որ այդ հոգին մեր բոլոր Եկեղեցիներուն եւ համայնքներուն մէջ տիրապետէ, որպէսզի Հայաստանայց Եկեղեցին ըլլայ իսկական հոգեւոր տունը իր զաւակներուն:

Տէրը ընդունի հոգին իր ծառային եւ պաշտօնէին, Գարեգին Պատրիարք Գազաննեանին, իր լուսաւոր ներկայութեան:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. Գարեգին Արք. Գազաննեան Պատրիարքի

Գարեգին Արք. Գազաննեան, աւագանի անունով Պետրոս, զաւակը Վաղարշակ եւ Շողակաթ Գազաննեանի, ծնած է Իսթանպուլ 1927-ին: Իր նախնական կրթութիւնը ստացած է Պէզնեան եւ Կեդրոնական վարժարաններու մէջ: Ապա 1940 Հոկտեմբերին մտած է Նրուսադէմի ժառանգաւորաց վարժարանը:

Նրուսադէմի Կիրեղ Պատրիարքէն Սարկաւագ ձեռնադրուած է 1945-ին իսկ 1950 Յունուարին կուսակրօն Քահանայ՝ ձեռամբ Նգիպտոսի Առաջնորդ Տ. Մամբրէ Արք. Սիրունեանի:

Հայր Գարեգին եղած է ժառանգաւորաց վարժարանի փոխ-տեսուչ՝ 1946-1949, վարած է ուսուցչական պաշտօն ժառանգաւորաց վարժարանի եւ Ս. Թարգմանչաց Դպրոցին մէջ մինչեւ 1951 թուականը: Եղած է, Ս. Աթոռոյ Դիւանապետ եւ Ընդհ. Ժողովի Բ. Ատենադպիր եւ Տնօրէն ժողովի անդամ:

Ընդունելով Գարեգին Պատրիարք Խաչատուրեանի հրաւերը՝ 1951 Դեկտեմբերին կը վերադառնայ Պոլիս՝ ստանձնելու ծրագրեալ Դպրեվանքի տեսչութիւնը: Մինչեւ Դպրեվանքի բացումը՝ 1954 Յունուար, ան եղած է Ուսուցիչ Կեդրոնական եւ Պէզնեան Երկրորդական վարժարաններու եւ նաեւ Ուսուցիչ-տնօրէն Քահանայից դասարաններու Պատրիարքարանի մէջ: